ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱԼՎՈՐԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ ТАЛВОРИК

<<05>> <<02>> 2015թ

N 9

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
Պարոն՝ Ա. Ղահրամանյանին

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Տալվորիկ գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի Հունվարի 29-ի թիվ 1 հերթական նիստի որոշումները:

Առդիր 9 թերթ

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՄԱՆԹԵԼՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 12.96/1594-15
11 02 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Հունվարի 29 — թիվ 1

# ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

Տալվորիկ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել թիվ 1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա. Մկրտչյան | | | |
| Հ. Վարդանյան | | | |
| Վ. Հարությունյան | | | |
| Խ.Ավդալյան | | | |
| Զ.Զաքարյան | | | |

Տալվորիկ համայնքի ղեկավար Վ. Սաղաթելյան

2015 թվականի հունվարի «29»
գ. Տալվորիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի
ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ N 1 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

| | |
|---|---|
| 1. Օրակարգի հաստատումը: | Զեկ՝ Կ. Սաղաթելյան |
| 2. Արմավիրի մարզի Տալվորիկ գյուղական համայնքի վարչական բյուջեի փոփոխության մասին: | Զեկ՝ Կ. Սաղաթելյան |
| 3. Գյուղապետարանի համար 1 նոութբուք և 1 համակարգիչ ձեռք բերելու մասին: | Զեկ՝ Կ.Սաղաթելյան |
| 4. Համայնքի Սեփականություն հանդիսացող Տրանսպորտային միջոցները և գյուղ գործիքները վարձակալությամբ (վարձույթով) տրամադրելու մասին: | Զեկ՝ Կ. Սաղաթելյան |
| 5.Համայնքի սեփականություն համարվող գյուղ տեխնիկաների և ավտոմեքենաների աճուրդով վաճառքի մասին: | Զեկ՝ Կ. Սաղաթելյան |
| 6. Գյուղապետարանի համար գրասենյակային Նյութեր ձեռք բերելու մասին: | Զեկ՝ Կ. Սաղաթելյան |
| 7.Ծառայողական ավտոմեքենայի համար Վառելանյութի ձեռք բերման մասին: | Զեկ՝ Կ. Սաղաթելյան |
| 8. Համայնքի տարածքում աղբահանություն կազմակերպելու մասին: | Զեկ՝ Կ. Սաղաթելյան |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Հունվարի 29 — թիվ 2-Ն

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

Տալվորիկ համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալվորիկ գյուղական համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 152723,1 հազար դրամը ամբողջությամբ ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս:

2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի 1855853,7 դրամ գումարը բաշխել համայնքի բյուջեի ֆոնդային մասին՝ հետևյալ բաժիններին և հոդվածներին:
ա) 500,0 հազար դրամ գումարը հատկացնել 01.1.1 բաժնի 5122 հոդվածի միջոցներին համակարգիչ և նոութբուք ձեռք բերելու համար:
բ) 300,0 հազար դրամ գումարը հատկացնել 01.1.1 բաժնի 5121 հոդվածի միջոցներին՝ ծառայողական ավտոմեքենայի պահպանման ծախսերի համար:
1055853,7 դրամ գումարը հատկացնել 01.6.1 բաժնի 5113 հոդվածի միջոցներին՝ համայնքի խորքային հորի կապիտալ վերանորոգման նպատակով:

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.Մկրտչյան | | | |
| Հ.Վարդանյան | | | |
| Վ. Հարությունյան | | | |
| Խ.Ավդալյան | | | |
| Ջ. Ջաքարյան | | | |

Տալվորիկ համայնքի ղեկավար՝ Վ. Սաղաթելյան
2015 թվականի հունվարի «29»
գ. Տալվորիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Հունվարի 29 թիվ 3

# ԳՈՒՄԱՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար առաջարկությունը.

Տալվորիկ համայնքի ավագանին որոշում է՝

1. Արմավիրի մարզի Տալվորիկ գյուղական համայնքի գյուղապետարանի համար ձեռք բերել համակարգչային սարքավորումներ:
2. Տալվորիկ գյուղական համայնքի գյուղապետարանի համակարգչային սարքավորումների ձեռք բերման համար գումարը հատկացնել համայնքի ֆոնդային բյուջեի 01/1/1 հատվածի 5122 հոդվածի միջոցներից 487,500 հազար դրամ:
3. Հանձնարարել համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել գնման պայմանագիր անհատ ձեռներեց Ռուբեն Նիկոյանի հետ և չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր դրամ գումար հատկացնել այդ նպատակի համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | Ա. Մկրտչյան | | | |
| | Հ. Վարդանյան | | | |
| | Վ. Հարությունյան | | | |
| | Խ. Ավդալյան | | | |
| | Զ. Զաքարյան | | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

2015 թվականի հունվարի «29»
գ. Տալվորիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Հունվարի29 | թիվ 4

# ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով.

Տալվորիկ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Տալվորիկ գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային միջոցը վարձակալությամբ (վարձույթով) տրամադրել մինչև 2015 թ-ի նոյեմբերի 30-ը հետևյալ վարձավճարով:

1. Խոտհնձիչ (գերմանկա) տրակտորը տրամադրել վարձույթով Հրաչյա Պողոսյանին 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ:
2. ՄՏԶ-80 տրակտորը կցասայլով և խոտ հակավորիչով տրամադրել Համլետ Վարդանյանին 150.000( մեկ հարյուր հիսուն հազար) դրամով:
3. ՄՏԶ – 80 տրակտորը գյուղ գործիքներով 50,000(հիսուն հազար) դրամ և Տ- 150 տրակտորը 250,000 ( երկու հարյուր հիսուն հազար) դրամ վարձավճարով տրամադրել Վրեժ Պետրոսյանին
Համայնքի սեփականություն հանդիսացող վերոհիշյալ շարժական մեխանիզմները տրամադրել գույքի վարձակալման պայմանագրով:

Վարձակալությամբ հանձնված գույքի կապիտալ և ընթացիկ վերանորոգումը թողնել վարձակալի վրա:

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ Ա. Մկրտչյան | | | |
| Հ. Վարդանյան | | | |
| Վ. Հարությունյան | | | |
| Խ. Ալդալյան | | | |
| Ջ. Զաքարյան | | | |

Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավար Կ. Սաղաթելյան

2015 թվականի Հունվարի «29»
գ. Տալվորիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Հունվարի 29 թիվ 5

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂ. ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով.

Տալվորիկ համայնքի ավագանին որոշում է՝

Տալվորիկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ.տեխնիկաները և ավտոմեքենաները աճուրդով վաճառել հետևյալ գներով՝

1. <<Զիլ ՄՄԶ- 554Մ>> մակնիշի ավտոմեքենան - 1100000( մեկ միլիոն հարյուր հազար) դրամ:
2. Վնասված <<Վազ 2106>> մակնիշի ավտոմեքենան 110000 ( մեկ հարյուր տաս հազար) դրամ:
3. Անսարք Կավկ-685մ մակնիշի ավտոբուս 500000 ( հինգ հարյուր հազար) դրամ:
4. Անսարք ԷՕ-2621 մակնիշի էքսկավատոր 1400000 ( մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ:
5. Վնասված <<Գազ 31105>> մակնիշի ավտոմեքենա 900000 ( ինը հարյուր հազար) դրամ:
6. <<Կիրովեց-701>> անբավարար տրակտոր 1850000 ( մեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) դրամ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | Ա. Մկրտչյան | | | |
| | Հ. Վարդանյան | | | |
| | Վ. Հարությունյան | | | |
| | Խ. Ավդալյան | | | |
| | Ջ. Զաքարյան | | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

2015 թվականի Հունվարի «29»
գ. Տալվորիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Հունվարի 29 — թիվ 6

## ԳՈՒՄԱՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով.

Տալվորիկ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հանձնարարել համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել «Արմավիր Պրինտ» ՍՊԸ-ի հետ գրասենյակային նյութերի ձեռք բերման համար համայնքի վարչական բյուջեի 01/1/1 հատվածի 4261 հոդվածի միջոցներից հատկացնել 250.0 հազար դրամ գումար:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | Ա. Մկրտչյան | | | |
| | Հ. Վարդանյան | | | |
| | Վ. Հարությունյան | | | |
| | Խ. Ավդալյան | | | |
| | Զ. Զաքարյան | | | |

Տալվորիկ համայնքի ղեկավար — Կ. Սաղաթելյան

2015 թվականի հունվարի «29»
գ. Տալվորիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Հունվարի 29 — թիվ 7

# ԳՈՒՄԱՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը:

Տալվորիկ համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալվորիկ գյուղական համայնքի գյուղապետարանի ծառայողական ավտոմեքենաների համար վառելանյութ (բնական գազ) ձեռք բերել.

1) Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագիր, «Քաջ-Սարդարապատցի» ՍՊԸ-ի հետ և 900.0 հազար դրամ փոխանցել նրա հաշվարկային հաշվին, վարչական բյուջեի 01/1/1 հատվածի 4264 հոդվածից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ Ա. Մկրտչյան | | | |
| Հ. Վարդանյան | | | |
| Վ. Հարությունյան | | | |
| Խ. Ավդալյան | | | |
| Զ. Զաքարյան | | | |

ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՔԱՂԱԹԵԼՅԱՆ

2015 թվականի հունվարի «29»
Տալվորիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի Հունվարի 29 — թիվ 8

## ԳՈՒՄԱՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 12 –րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Տալվորիկ գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տալվորիկ գյուղական համայնքի տարածքում կազմակերպել աղբահանություն:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աղբահանության ծառայություն մատուցելու համար պայմանագիր կնքել Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղի Ա/Ձ Աղասի Թորոսյանի հետ և այդ նպատակի համար համայնքի վարչական բյուջեի 05/1/1 հատվածի
4213
հոդվածի միջոցներից հատկացնել տարեկան 200.0 հազ. դրամ:
Աղբաթափությունը կազմակերպել շաբաթական մեկ անգամ:
Գնումը իրականացնել <<բանակցային ընթացակարգ առանց հայտարարության գնման ձևով>>:

3. Սույն որոշումն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

| | | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | Ա. Մկրտչյան | | | |
| | Հ.Վարդանյան | | | |
| | Վ. Հարությունյան | | | |
| | Խ.Ավդալյան | | | |
| | Ջ.Զաքարյան | | | |

Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավար Կ.Սաղաթելյան

2015 թվականի Հունվարի « 29 »

գ. Տալվորիկ